ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/6-Ա-1

«20» հունիսի 2022թ.

ք. Երևան

«Ջրային կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Մարգարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Մեդիսոն Էյբլ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Է. Աբրահամյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ջրատարների վերականգնման շինարարական աշխատանքներ - ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի ջրանցքի ձախ ճյուղի հիմնանորոգման աշխատանքները

Աշխատանքների անվանումը

(այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն նախագծային փաստաթղթերի՝ 6 ամիս:

աշխատանքների կատարման վերջնաժամկետը

1.3.1 Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

1.3.2 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում.

1.3.2.1 հեղինակային և/կամ տեխնիկական հսկողության պայմանագրերի լուծման դեպքում՝ պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքմանը հաջորդող օրն ընկած ժամանակահատվածը,

1.3.2.2 շինարարական աշխատանքների կատարումն անհնարին դառնալու օրվանից մինչև դրանց վերսկսելու օրն ընկած ժամանակահատվածը, որն արձանագրվում է տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների առաջարկության հիման վրա՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված եզրակացությամբ:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ

սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 2.1 Հավելվածում:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.1.1 **Կապալառուն ներկայացնում է կատարողական փաստաթղթերի փաթեթը, որը պետք է կազմված լինի տեխնիկական հսկողություն և հեղինակային հսկողություն իրականացնող անձանց մասնակցությամբ:**

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի

N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 225 000 000 (երկու հարյուր քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ, որից 37 500 000 (երեսունյոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 33 750 000 (երեսուներեք միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

5.1.2 Կապալառուն կանխավճար ստանալու վերաբերյալ գրությամբ Պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի չափի, դրա շրջանակներում կատարման ենթակա աշխատանքների և ժամկետների վերաբերյալ հիմնավորումներ: Հատկացվող կանխավճարի մարման ժամկետները պետք է համապատասխանեն պայմանագրով սահմանված օրացուցային գրաֆիկով նախատեսված ժամկետներին:

5.1.3 Պատվիրատուն կանխավճար հատկացնում է **պատասխանատու ստորաբաժանման** եզրակացության հիման վրա:

5.1.4 Ներկայացվող բանկային երաշխիքի գործողության ժամկետը պետք է առնվազն 90 աշխատանքային օրով ավելի լինի Կապալառուի կողմից կանխավճարի գումարի չափով կատարվելիք աշխատանքների ժամկետից:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական)

տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5

օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N2.1, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ջրային կոմիտե	«Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ա. Ահարոնյան 5շ.,բն.43
Հ/Հ 900011567386	հեռ. +374 99 909009
ՀՎՀՀ 02555816	Բանկը «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Կոմիտեի գլխավոր քարտուղար	Հ/Հ 1150006841550100
	ՀՎՀՀ 01012522
	Էլ. հասցե medison-eybl@mail.ru
Ա. ՂԱԶԱՐՅԱՆ	Տնօրեն
(ստորագրություն)	Է. Աբրահամյան.
Կ. Տ.	Կ.Տ /ստորագրություն/

«20» հունիսի 2022 թ. կնքված ծածկագրով պայմանագրի
Հավելված թիվ 1

ՋԿ-ԲՄԱԾՁԲ-22/6-Ա-1

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

« ՋՐԱՏԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

1. ջրատարների վերականգնման շինարարական աշխատանքներ - ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի ջրանցքի ձախ ճյուղի հիմնանորոգման աշխատանքներ	ՀՀ Արագածոտնի մարզի

* Կապալառուն աշխատանքները կատարում է հասցեում:

Հ/Հ	Հիմնավորում	Աշխատանքների անվանումը	Չափ. միավորը	Քանակը	Միավորի արժեքը , հազ.դրամ (թվերով))	Ընդհանուր արժեքը, հազ.դրամ (թվերով)
1	2	3	4	5	6.000	7.000
1-1. Ջրաչափական հոր						
		Հողային աշխատանքներ				
1	46-84 46-99 գ=0.5 1-171 գն.3	Գոյություն ունեցող ջրաչափական հորի քանդում և առաջացած թափոնը բարձում և տեղափոխում թափոնավայր մինչև 10կմ հեռ. վրա	մ^3	16.0	11.717	187.469
2	1-52	IV կարգի գրունտի մշակում ջրաչափական հորի փոսերում	մ^3	55.0	1.562	85.923
3	1-261 1-271	Լիցքի իրականացում հանված գրունտից	մ^3	37.0	0.976	36.127
4	1-261 1-271 1-1185	Հակադարձ լիցքի իրականացում ավելացած գրունտից տեղում հարթեցումով	մ^3	18.0	0.976	17.575
		Բետոնային աշխատանքներ			0.000	0.000
5	37-705	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում 10սմ հաստության B7.5 , F150, W4 դասի բետոնով	մ^3	5.0	43.938	219.690
6	37-707	Ջրաչափական հորի բետոնի իրականացում B15, F150, W4 դասի բետոնով	մ^3	40.0	78.112	3124.480
7	37-737	Ամրան A500c, տեղադրումով	տ	1.598	488.200	780.290
8	37-737	Ամրան A240c , տեղադրումով	տ	0.124	488.200	60.634
		Մետաղական աշխատանքներ			0.000	0.000
9	22-64	Մետաղական խողովակն DN57x3մմ ,տեղադրումով	մ	1.4	4.882	6.835
10	39-1	Ջրաչափական բացվածքի մետաղական կառուցվածք	կգ	53.0	1.758	93.149
11	շուկա	Ջրաչափական ծող L=1,2	հատ	1	7.811	7.811
		Մեկուսացման աշխատանքներ			0.000	0.000

12	15-613	Մետաղական կառուցվածքների երկտակ ներկում	մ^2	1.5	1.465	2.197
13	42-51	Հորիզոնական ջերմային կարեր N1 , տեղադրումով	մ	3.6	2.929	10.545
14	42-51	Ուղղաձիգ ջերմային կարեր N2 , տեղադրումով	մ	4.6	5.858	26.949
		Ընդամենը 1-1մասի	*հազ. դր.*			***4659.674***
1-2. LP- 8 Ե/բ հավաքովի վաքեր ՆԿ 0+00 -ՆԿ 6+40						
Հողային աշխատանքներ						
1	1-236	Ջրագծի հունի մշակում IV կարգի գրունտում հունը բերելով նախագծային թեքության ՆԿ 0+00-ՆԿ 2+80	մ^3	336.0	1.562	524.913
2	1-235	Ջրագծի հունի մշակում III կարգի գրունտում հունը բերելով նախագծային թեքության ՆԿ 2+80-ՆԿ 6+40	մ^3	324.0	1.269	411.260
3	1-52	Ե/բ վաքերի հենարանների փոսորակի փորում IV կարգի գրունտում նախագծային թեքությամբ ՆԿ 0+00- ՆԿ 2+80 կողալիցքով	մ^3	28.2	1.562	44.055
4	1-51	Ե/բ վաքերի հենարանների փոսորակի փորում III կարգի գրունտում նախագծային թեքությամբ ՆԿ 2+80- ՆԿ 6+40 կողալիցքով	մ^3	30.0	1.269	38.080
5	1-260 1-271	Հակադարձ լիցք տեղի բնահողից Ե/բ վաքերի երկարությամբ	մ^3	324.0	0.976	316.354
6	1-261 1-271	Հակադարձ լիցք տեղի բնահողից Ե/բ վաքերի երկարությամբ	մ^3	394.2	0.976	384.897
7	8-11-1	Միջանկյալ բետոնե հենարանների հիմքերի նախապատրաստական շերտի իրականացում խճից 10-12մմ հատիկակազմով խտացումով 20սմ հաստ.	մ^3	6.7	9.764	65.419
8	37-717	Ե/բ հավաքովի վաքեր ΛP- 8 մակնիշի B22.5, F150, W6 դասի բետոնով , ջրամեկուսիչ կարերի տեղադրում՝ 107հատ	մ^3	82.39	180.634	14882.435
9	ինֆ.շուկա	Ե/բ վաքերի ջրամեկուսիչ միացման հանգոյցների կարեր , արժեքը	մ	239.68	1.953	468.047
10	37-713	Հիմնային հավաքովի բլոկ B15, F150, W4 դասի բետոնով 0.6x0.5x0.4մ , տեղադրումով	մ^3	12.84	82.994	1065.643
		Ընդամենը 1-2մասի	*հազ. դր.*			***18201.102***
1-3. Ջրընդունիչ -ջրբաժան հոր						

		Հողային աշխատանքներ				
1	1-52	IV կարգի գրունտի մշակում ջրաչափական հորի և խողովակաշարի խրամուղու փոսորակում	մ^3	60.0	1.269	76.159
2	1-261 1-271	Լիցքի իրականացում հանված գրունտից	մ^3	46.0	0.586	26.949
3	1-261 1-271 1-1185	Հակադարձ լիցքի իրականացում ավելացած գրունտից տեղում հարթեցումով	մ^3	14.0	0.391	5.468
		Բետոնային աշխատանքներ				0.000
4	37-705	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում 10սմ հաստության B7.5 , F150, W4 դասի բետոնով	մ^3	2.8	43.938	123.026
5	37-707	Ջրընդունիչ-ջրբաժան հորիի իրականացում B15, F150, W4 դասի բետոնով	մ^3	16.0	68.348	1093.568
6	37-737	Ամրան A500c, տեղադրումով	տ	0.856	488.200	417.948
7	37-737	Ամրան A240 c, տեղադրումով	տ	0.0354	488.200	17.282
		Մետաղական աշխատանքներ				0.000
8	22-73	Պողպատե խողովակ D=426x6մմ , տեղադրումով, փորձարկումով	մ	40.0	65.907	2636.280
9	22-567	Պողպատե խողովակի D=426x6մմ, նորմալ հակակոռոզիոն հիդրոմեկուսացում	մ	40.0	1.465	58.584
10	22-120-1	Հարթ փական ГС 40x40 2 հատ, տեղադրումով	տ	0.13	1562.240	196.842
11	15-613	Մետաղական կառուցվածքների երկտակ ներկում	մ^2	2.0	1.465	2.929
		Ընդամենը 1-3մասի	հազ. դր.			*4655.036*
		1-4. Г-աձև Ե/բ բլոկներով ջրանցք ՆԿ 6+40 -ՆԿ 24+40				
		Հողային աշխատանքներ				
1	1-236	Ջրանցքի հունի մշակում IV կարգի գրունտում հարթեցումով, հունը բերելով նախագծային թեքության	մ^3	3070.0	1.562	4796.077
2	1-236	Ջրանցքի հունի մշակում V կարգի գրունտում	մ^3	700.0	2.734	1913.744
3	1-52	Ջրանցքի հունի մշակում փոսորակներում, տոփանումով,հարթեցումով, հունը բերելով նախագծային թեքության	մ^3	80.5	1.953	157.200
4	1-261 1-271	Հակադարձ լիցք տեղի բնահողից հավաքովի Ե/բ վաքերի երկարությամբ	մ^3	3770.0	0.976	3681.028
		Բետոնային աշխատանքներ				0.000

1	8-11-1	Ջրանցքի նախապատրաստական շերտի իրականացում խճից 10-12մմ հատիկակազմով խտցումով 15սմ հաստ.	մ^3	680.0	9.764	6639.520
2	37-705	Ջրանցքի նախապատրաստական շերտի իրականացում B7.5 բետոնից 10սմ հաստության	մ^3	390.0	48.820	19039.800
3	37-720 շուկա	Ե/բետոնե հավաքովի բլոկներ Г-10.32-2 ջրամեկուսիչ կարերի տեղադրում ,ամրանի ծախսը 71.58կգ/մ^3 B15, F150, W6 դասի բետոնից- 1200 հատ	մ^3	456.0	180.634	82369.104
4	37-705	Հավաքովի Г-աձև բլոկների անկյունային հատվածներում մոնոլիտ ե/բետոն B15, F150, W4 դասի , ամրանի ծախսը 80.2կգ/մ3	մ^3	28.0	70.301	1968.422
5	37-737	Ամրան Φ12 A500c, տեղադրումով	տ	1.89	488.200	922.698
6	37-737	Ամրան Φ6 A240 տեղադրումով	տ	0.21	488.200	102.522
7	37-705	Ջրանցքի հատակի ե/բետոնի իրականացում B15, F150, W4 դասի բետոնից 12սմ հաստության	մ^3	173.0	66.395	11486.370
8	37-737	Ամրան Φ10 A500c L=760մմ 12000հատ, տեղադրումով	տ	5.623	488.200	2745.051
9	37-737	Ամրան Φ8 A240 L=11960մմ 450հատ, տեղադրումով	տ	2.124	488.200	1036.790
10	42-51	Կար 3 ջերմային լայնական կար մոնոլիտ ե/բետոնե հատակում 12մ-ը մեկ	մ	120.0	2.441	292.920
11	ինֆ.շուկա	Կար 4 Г-աձև Ե/բ բլոկներում 12 մ-ը մեկ , արժեքը	մ	420.0	2.441	1025.220
12	ինֆ.շուկա	Կար 5 Г-աձև Ե/բ բլոկներում 3 մ-ը մեկ , արժեքը	մ	1680.0	1.953	3280.704
13	8-27	Г-աձև Ե/բ բլոկների արտաքին պատերի մերկշերտ հիդրոմեկուսացում	մ^2	3600.0	1.465	5272.560
		Ընդամենը 1-4մասի	հազ. դր.			*146729.731*
1-5 Г-աձև Ե/բ բլոկներով ջրանցքի ճանապարհային անցում 2հատ						
1	1-52	IV կարգի գրունտի մշակում փոսորակում խողովակ-անցման գլխամասերում և խողովակի խրամուղում կատարելով կողլիցք	մ^3	96.0	1.562	149.975
2	1-261 1-271 1-1185	Հակադարձ լիցք հանված բնահողից տեղում հարփեցումով	մ^3	96.0	0.976	93.734
Բետոնային աշխատանքներ						0.000

3	37-707	Բետոնե հենապատերի իրականացում B15, F150, W4 դասի բետոնով	մ^3	28.00	70.301	1968.422
4	6-173	Միաձույլ ե/բետոնե ծածկի սալի իրականացում B15, F150, W4 դասի բետոնով,ամրանների տեղադրումով	մ^3	5.0	97.640	488.200
5	37-705	Բետոնե հատակի նախապատրաստական շերտի իրականացում B7.5 բետոնից	մ^3	1.6	48.820	78.112
6	37-705	Բետոնե հատակի իրականացում B15, F150, W4 դասի բետոնով, ամրանների տեղադրումով	մ^3	2.4	66.395	159.348
7	Ինֆ.	Ամրան A500c	կգ	780.800	0.488	381.187
8	Ինֆ.	Ամրան A240	կգ	209.800	0.488	102.424
		Ընդամենը 1-5 մասի	*հազ. դր.*			*3421.403*
1-6.Ր-աձև Ե/Բ բլոկներով ջրանցքի ջրթողներ 14հատ						
Հողային աշխատանքներ						
1	1-52	IV կարգի գրունտի ջրունդունիչի մշակում փոսորակում և խրամուղում	մ^3	238.0	1.562	371.813
2	1-261 1-271 1-1185	Հակադարձ լիցքի և հողային բարձիկի իրականացում տեղի քանդված գրունտից տեղում հարթեցումով	մ^3	238.0	0.781	185.907
3	37-76-2	Ջրթող հիմքի և չոր քարե շարվածքի կոպճա-ավազային նախապատրաստական շերտի իրականացում h= 10սմ	մ^3	7.00	9.764	68.348
Բետոնային աշխատանքներ						0.000
1	46-99 գ=0.5 1-171 գն.3	L=1մերկարությամբ ջրանցքի կողի բետոնի քանդում և տեղափոխում թափոնավայր մինչև 10կմ հեռ. վրա	մ^3	4.20	9.764	41.009
2	13-263	Գոյություն ունեցող բետոնի մակերեսի մաքրում	մ^2	14.00	0.381	5.331
3	37-707	Ջրթողի և հենարանների իրականացում B15, F150, W4 դասի բետոնով	մ^3	21.00	68.348	1435.308
4	37-727	Ամրանային խարիսխ Φ12 A500c L=400մմ 6հատ , տեղադրումով	կգ	89.5	0.488	43.674
Մետաղական աշխատանքներ						0.000
1	22-73	Պողպատե խողովակ D=325x4մմ , տեղադրումով, փորձարկումով	մ	84.0	38.080	3198.686
2	22-565	Պողպատե խողովակի D=325x4մմ, նորմալ հակակոռոզիոն հիդրոմեկուսացում	մ	84.0	1.172	98.421

3	22-120-1	Հարթ փական ՐՀ 40x40 1 հատ, տեղադրումով	տ	0.882	1562.240	1377.896
		Մեկուսացման աշխատանքներ				0.000
1	15-613	Մետաղական կառուցվածքների երկտակ ներկում ջրակայուն հակակորոզիոն ներկով	$մ^2$	14.0	1.467	20.532
2	1-1218	Չոր քարե շարվածքի իրականացում t=20մմ	$մ^3$	8.4	9.764	82.018
		Ընդամենը 1-6 մասի	*հազ. դր.*			*6928.943*
		1-7.Ր-աձև Ե/Բ բլոկներով ջրանցքի վերջնամաս				
		Հողային աշխատանքներ				
1	1-52	Ջրանցքի հունի մշակում IV կարգի գրունտներում մինչև գոյություն ունեցող ջրանցքի հուն	$մ^3$	15.0	3.020	45.301
2	8-4	Զարե շարվածքի իրականացում ցեմենտ ավազային շաղախով 30սմ հաստ.	$մ^3$	5.00	17.575	87.876
		Ընդամենը 1-7 մասի	*հազ. դր.*			*133.177*
		Ամբողջը ըստ նախահաշվի՝				184729.064
		Չնախատեսված ծախսեր 1.5% /հատկացվում են համապատասխան հիմնավորումների հիման վրա/				2770.936
		Ընդամենը՝ չնախատեսված ծախսերով				187500.000
	ԱԱՀ - 20 %					37500.000
	Ամբողջը					225000.000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011567386
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղար

Ա. ՂԱԶԱՐՅԱՆ
(ստորագրություն)
L. S.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ա. Ահարոնյան 5շ.,բն.43
հեռ. +374 99 909009
Բանկը «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150006841550100
ՀՎՀՀ 01012522
Էլ. հասցե medison-eybl@mail.ru
Տնօրեն

Է. Աբրահամյան
Կ.Տ. /ստորագրություն/

«20»
ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/6-Ա

Հավելված թիվ 2
հունիսի 2022 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Չափաբաժին 3

ՋՐԱՏԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ – ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆԻ ՋՐԱՆՑՔԻ ՁԱԽ ՃՅՈՒՂԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Աշխատանքների անվանումը	N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
			Սկիզբը	Ավարտը
Ե/բ հավաքովի ԼՊ-8 վաքերով ՆԿ 0+00-ՆԿ 6+40 հատված	1	Ջրագծի հունի մշակում III/IV կարգի գրունտներում հունը բերելով նախագծային թեքության	Աշխատանքներիմեկնակը կտրվի պատվիրատուի հետ համաձայնեցման օրվանից	6 ամիս
	2	Միջանկյալ բետոնե հենարանների հիմքերի նախապատրաստական շերտի իրականացում խճից 10-12մմ հատիկակազմով խտացումով 20 սմ հաստ.		
	3	Ե/բետոնե վաքերի միջանկյալ 0-1 (0.6x0.5x0.4)		
	4	Նոր ե/բետոնե ԼՊ-8 վաքերի մոնտաժում		
	5	Վաքերի ջրամեկուսիչ կարեր		
	6	Հակադարձ լիցք տեղի բնահողից և ե/բետոնե վաքերի երկարությամբ		
Ե/բ հավաքովի Գ-աձև բլոկներ ՆԿ 6+00-ՆԿ 24+40 հատված	7	Ջրանցքի հունի մշակում IV/V կարգի գրունտում հարթեցումով տոփանումով, հունը բերելով նախագծային թեքության		
	8	Ջրանցքի նախապատրաստական շերտի իրականացում խճից 10-12մմ հատիկակազմով խտացումով 15 սմ հաստ.		
	9	Հավաքովի ե/բ Գ-աձև բլոկներ Գ 10.30-2, ամրանի ծախսը 71.58 կգ/մ^3 B15 F150		
	10	Բետոնային աշխատանքներ		
	11	Ջերմային կարերի իրականացում		
	12	Գ-աձև ե/բետոնե բլոկների արտաքին պատերի երկշերտ հիդրոմեկուսացում		
	13	Հակադարձ լիցք տեղի բնահողից ե/բետոնե վաքերի երկարությամբ		
Ենթակառուցվածքներ	14	Ջրաչափական հոր		
	15	Մարիչ հոր		
	16	Ճանապարհային անցումներ		
	17	Ջրթողներ		
	18	Ջրանցքի վերջ ՆԿ 24+40: Ջրթափ գոյություն ունեցող ջրանցք		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011567386
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղար

Ա. ՂԱՋԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ա. Ահարոնյան 5շ.,բն.43
հեռ. +374 99 909009
Բանկը «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150006841550100
ՀՎՀՀ 01012522
Էլ. հասցե medison-eybl@mail.ru
Տնօրեն

Է. Աբրահամյան
Կ.Տ /ստորագրություն/

Հավելված թիվ 2.1
«20» հունիսի 2022թ. կնքված
ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/6-Ա-1 ծածկագրով պայմանագրի

ՁՓՅ

Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի երաշխիքային ժամկետներ
ջրատարների վերականգնման շինարարական աշխատանքներ - ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի ջրանցքի ձախ ճյուղի հիմնանորոգման աշխատանքներ

Վերականգնվող հատվածներ	Երաշխիքային նվազագույն ժամկետ, տարի
Մետաղական սարքավորումներ	20 տարի,
Պողպատե խողովակներ	40 տարի,
Երկաթբետոնյա մոնոլիտ կառուցվածքներ	20- 25 տարի,
Հավաքովի ե/բ կառուցվածքներ	35-40 տարի

Մրցույթի հաղթող Կապալառու կազմակերպությունը շինարարության ավարտից հետո շահագործման ընթացքում 1 տարի (առնվազն ոռոգման 1 սեզոն) երաշխիքային ժամկետում պարտավոր է վերացնել շինարարական աշխատանքներում և տեղադրված սարքավորումներում ի հայտ եկած բոլոր թերությունները:

Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն), օգտագործվող նյութերի և սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջներ համաձայն նախագծի

N	Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորում	Չափի միավոր	Քանակ	Մասնակցի կոմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ	Արտադրող ընկերության անվանումը	Մոդել /առկայության պարագայում/	Առաջարկվող սարքավորման անձնագրային տեխնիկական բնութագիր
1	2	3	4	5	6	7	8
1	Ջրաչափական ձող L=1.2	հատ	1	20 տարի	**ОАО «Сафоновский завод «Гидрометприбор»**	РВПМЭ	Չափման սանդղակի քայլը 2սմ, էմալեպատ մետաղական ձող՝ մշտական ամրացմամբ
2	Հարթ փական	հատ	2	20 տարի	ООО «Электроромкомплект»	ГС 40x40	Հարթ խորքային փական ГС 40x40, H=1,0մ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011567386
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղար

_____ Ա. ՂԱՋԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ա. Ահարոնյան 52.,բն.43
հեռ. +374 99 909009
Բանկը «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150006841550100
ՀՎՀՀ 01012522
Էլ. հասցե medison-eybl@mail.ru
Տնօրեն
_____ Է. Աբրահամյան
Կ.Տ /ստորագրություն/

Հավելված N 3
հունիսի 2022թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

«20»
ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/6-Ա-1

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**							
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	45231132/5	Ջրատարների վերականգնման շինարարական աշխատանքներ	33 750 000	112 500 000	112 500 000	225 000 000	225 000 000	225 000 000	225 000 000	225 000 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011567386
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղար

Ա. ՂԱԶԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ա. Ահարոնյան 5շ.,բն.43
հեռ. +374 99 909009
Բանկը «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150006841550100
ՀՎՀՀ 01012522
Էլ. հասցե medison-eybl@mail.ru
Տնօրեն
Է. Աբրահամյան.
Կ.Տ /ստորագրություն/

Հավելված թիվ 4
«20» հունիսի 2022թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/6-Ա-1

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«20» հունիսի 2022թ. կնքված
ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/6-Ա-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն